



ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Հայեացք դեպի դարադարձ՝ 2015...

Մշուշապատումի պատեհապաշտ փորձ մըն է՝

**ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
«ՍԵՆԱԹԻՆ» ՀԱԿԱԳՐՈՒՄԸ
ՏԱՐԱԳԻՐ ԱՐԵԻՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ
«ՔՈՆԿՐԵՍԻՆ»**

*Արեւմտահայաստանի հանդէպ մեր պարզած իրա-
ւագիտական ձմեռնաքունը պիտի աւարտի մահո՞վ...
Թէ՞ պիտի նմանի սեւ արջերու ձմեռնաքունին, որ
վերջ կը գտնէ Գարնան: Այդ ե՞րբ պիտի գայ Գարունը
մեր իրաւագիտական ձմեռնաքունին...:*

Գ.Տ.

ՍԵՐՈՒ ԳԱՍԴԱՐ ՏԵՐՏԵՐԵԱՆ

Պէյրուս, 24 Ապրիլ 2011

Ա.- ՏԱՐԱԳԻՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՔՈՆԿՐԷՍԻ ԻՐԱԻԱՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԻՈՐՈՒՄԸ:

Յետ-եղեռնեան երեք տասնամեակներուն (1915-1945), Տարագիր Արեւմտահայութեան պառակտումին պատճառ դարձաւ Սփիւռքը Սովետական Հայաստանին հակադրելու քաղաքականութիւնը, որուն իբր հետեւանք, համահայկականութեան տեսլականը խաւարեցաւ, եւ տիրող հատուածականութիւնը պատճառ դարձաւ՝ մեր տեսադաշտէն Արեւմտահայաստանի դատին դուրս մնալուն, ամբողջ երեսնամեակ մը...:

1945 թ. Մայիսի 3-ին, Ս. Հայաստանի արտագին գործոց նախարարը՝ Ս.Կ.Կարապետեան, Ս. Միութեան արտագործ նախարարի տեղակալին ներկայացուց «Զեկուցագիր» մը՝ «Թուրքիոյ անցած նախկին հայկական տարածքների եւ արտերկրի մէջ ապրող հայերի հայրենիք վերադառնալու հնարաւորութիւնների մասին»: Հայկական տարածքներու վերադարձին կապակցութեամբ, Ս. Կ. Կարապետեան կ'առաջարկէր երեք տարբերակներ, որոնց քննութիւնը ցոյց կուտայ՝ թէ Միջագգ. Հանրային Իրաւունքին մէջ, սահմանազատում կայ՝ Արեւմտահայաստանի (Թրքահայաստանի) եւ Արեւելահայաստանի (Ռուսահայաստանի) միջեւ...: Քանի որ այս «Զեկուցագիր»ին հիման վրայ՝ Ս. Միութեան արտգործնախարարը, Վ. Մուրթով, Թուրքիայէն պիտի պահանջէր հայկական տարածքներ: Թէ՛ Ռուսահայաստանը միայն ներկայացնող Ս. Միութիւնը հայկական ո՞ր տարածքները Թուրքիայէն պահանջելու իրաւունքը ունէր, ճշգրտած են յիշեալ երեք տարբերակներուն մէջ՝ նուազագոյն, միջին եւ առաւելագոյն չափերով, հետեւեալ կարգով.-

- ա) նուազագոյն պահաջի տարբերակը իբր հիմք կ'ունենար՝ 1878-1914 թուականներու ռուս-թրքական սահմանին վերականգնումը, Ս. Միութեան վերամիաւորելով՝ Կարսի, Արտահանի եւ Սուրմալուի շրջանները:*

բ) Միջին պահանջի տարբերակը իբր հիմք կ'ունենար՝ 1878 թ. Սան-Սթեֆանոյի պայմանագրով որոշուած սահմանին վերականգնումը, Ս. Միուլթեան վերամիաւորելով՝ բացի Կարսի, Արտաճանի եւ Սուրմալուի շրջաններէն, Ալաշկերտի հովիտը եւս՝ Պայագետ քաղաքի հետ միասին:

զ) Առաւելագոյն պահանջի տարբերակը (բ)-ի վրայ կ'աւելցնէր՝ Սան-Սթեֆանոյի պայմանագրով եւ Ուիլսոնեան իրաւարար վճիռով հայկական հռչակուած 6 նահանգներէն երեքը՝ Էրզրումը, Վանը եւ Պիթլիսը եւս,- 6 նահանգներուն կէսը-, նկատի ունենալով՝ Վանէն երեւան գաղթած եւ բռնի տեղահանուած արեւմտահայերէն վերադարձողները,- ՆԵՐԳԱՂԹ-ի կազմակերպումով-, այդ հողերուն վրայ վերաբնակեցնելու պարագան: (Արման Կիրակոսեան, «Հայաստանը եւ սովետ եւ թրքական յարաբերութիւնները 1945-1946 թ.թ.»):

Այս երեքէն (ա)-ը միայն պահանջուեցաւ Ս. Միուլթեան կողմէ, նկատի ունենալով այդ օրերուն ստեղծուած միջազգային ուժերու նոր կշիռը՝ երբ ԱՄՆ կը սպառնար աթոմական զէնքի իր մենաշնորհով (զոր գործածած էր Հիւրոշիմայի եւ Նակագաքիի վրայ...): Սակայն, պահանջուած (ա) տարբերակն անգամ անիրագործելի դարձաւ՝ երբ ամերիկեան իմփերիալիզմը (Չրըչիլի մեղսակցութեամբ...) «ցուրտ պատերազմ»ը հռչակեց Սովետ. Միուլթեան դէմ, եւ յանձնապատանօրէն յայտարարեց՝ թէ թուրք-սովետական սահմանը կը նկատէր ամերիկեւսովետական սահմանագիծ»...:

Սակայն, Ս. Միուլթեան կողմէ բարձրացուած հայկական հողերու այս պաշտօնական պահանջը՝ ոչ միայն Տարագիր Արեւմտահայութեան պատմական յիշողութիւնը վերակենդանացուց Արեւմտահայաստանի դատին ուղղութեամբ, այլեւ՝ պատճառ դարձաւ Մեծ Եղեռնի 50-ամեակին, 1965 թ., երեւանի հրապարակներուն վրայ լսելու «Մեր հողերը, մեր հողերը» վանկարկումները եւ ապա՝ տեսնելու Ծիծեռնակաբերդի անշէջ հուրը...:

Բայց, Սփիւռքի մէջ շարունակուեցաւ հատուածականութիւնը եւ համահայկականութեան բացակայութիւնը իբր հետեւանք՝ Սփիւռքը Ս. Հայաստանին հակադրելու քաղաքականութեան, որ ընդդիմացաւ նոյնիսկ՝ պատմական ՆԵՐԳԱՂԹ-ին, եւ յանգեցաւ՝ Անթիլիասը էջմիածինին հակադրելու եւ Հայց. Եկեղեցին երկփեղկելու ազգաբանդ հետեւանքին...: Երկփեղկուած Սփիւռքի մէկ փեղկը լծուեցաւ Արեւմուտքի հակասովետ արշաւի կառքին եւ Հայ դատի բովանդակութիւնը նկատեց Սովետ Հայաստանի «ազատագրումը բոլշեփեան լուծէն», իսկ միւս փեղկը՝

ամբողջականօրէն կառչեցաւ Սովետական Հայաստանին, անոր մէջ տեսնելով Հայ դատի մասնակի լուծումը, բայց չմտածեց՝ լուծումը ամբողջական դարձնելու՝ Արեւմտահայաստանի ապագային մասին: Երկու հակադիր փեղկերու Հայ դատի օրակարգէն բացակայեցաւ Արեւմտահայաստանը, քանի որ երկու փեղկերն ալ հաւասարապէս կը գործէին՝ «Արեւելա-հայաստանակեդրոնութեան» նշանաբանով, մէկը՝ դէմ, միւսը՝ թեր...: Բայց երկուքն ալ տարուած Սովետ Հայաստանով եւ գրեթէ բարձր թողի ըրած Արեւմտահայաստանը... (Այս միականիութիւն առկայ է այսօր եւս...):

Անցեալ դարու 70-ականներու սկիզբէն, համահայկականութեան գաղափարը վերջապէս սկսաւ հող շահիլ՝ վարանոտ քայլերով, սփիւռքահայ հասարակական կեանքի գործիչներուն մօտ, եւ ասոնց ամէնէն յառաջապահները դուրս եկան յետ-եղեռնեան մօտ վեց տասնամեակ տեւած հատուածականութեան ճահիճէն: Համահայկականութեան գաղափարի այս զարթօնքին ազդանշաններէն մին էր՝ Պէյրութի մէջ հիմնուած Լիբանանաի Հայ Համալսարանաւարտներու Միութեան (ԼՀՀՄ), հայ քաղաքական բոլոր հոսանքներուն պատկանող՝ դաշնակցական, համայնավար, ռամկավար, հնչակեան եւ անկուսակցական համալսարանաւարտներու միջեւ դրական համագործակցութեան նշանաբանով: Առաջին անգամ ըլլալով՝ յետ-եղեռնեան Սփիւռքի պատմութեան մէջ...: (ԼՀՀՄ-ի մէջ սկսան գործակցիլ՝ կողք-կողքի, դոկտ. փրոֆ.-ներ Շաւարշ Թորիկեանը, Մելինէ Թօփաքեանը, Մարի Գասպարեանը եւ Մանուկ Գրմլեանը, Մեթր Գասպար Տէրտէրեանը եւ Մեթր Նիքոլա Հազարեանը, Յակոբ Պալեանը եւ Յակոբ Պօղոսեանը, Գրիգոր Շահինեանը, Յոլակ Ապտալեանը, Շուշանիկ Մոլոյեանը, Շաքէ Մաւրսաքալեանը, Մասիս Ալեքսանտրեանը, Վահէ Պահատրեանը, Տոքթ. Ժօզէֆ Կիտանեանը եւ Տոքթ. Զաւէն Լուռեանը, Տոքթ. Կարպիս Հարպոյեանը, Շահէ Սրապեանը, Կարօ Թազուրեանը, Անի Ճիկերեանը, Սօնիկ Վայէճեանը եւ հարիւրեակ մը ուրիշներ...): Եւ առաջին անգամ ըլլալով՝ ԼՀՀՄ-ը բազմազոյն հաւաքական այցելութիւններ կուտար Սովետ Հայաստանին, Հրայր Մարուխեան (1972 թ.) «Ազդակ»ի մէջ դրական մօտեցումով կը պարզաբանէր մարքսեան տեսակէտը՝ անհատի եւ հասարակութեան փոխյարաբերութեան մասին, Մեծ Եղեռնի 60-րդ տարելիցը (1975 թ.) կը նշուէր համահայկականօրէն, Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն, լիբանանահայ քաղաքական չորս հոսանքները՝ դաշնակցական, համայնավար, հնչակեան եւ ռամկավար, միասնաբար, եւ գործնական գետնի վրայ, կը վարէին դրական չէզոքութեան քաղաքականութիւնը, եւ՝ ՀՅԴ 24-րդ

ընդհ. Ժողովը դրական մօտեցում կ'ունենար Սովետ Հայաստանի հանդէպ... առաջին անգամ ըլլալով:

Իսկ անցեալ դարու 80-ականներու սկիզբէն, Սփիւռքի վերակազմակերպումի եւ Տարագիր Արեւմտահայութեան կողմէ Արեւմտահայաստանի հողային դատը միասնաբար հետապնդելու գաղափարը որդեգրեցին հոյ մը մտաւորականներ, որոնք Հալէպի մէջ կազմակերպեցին «Ապրիլեան Սեմինարներ» ու շարքը, որոնց քննարկումները հրատարակուեցան «Յո՞ Երթաս Հայ Սփիւռք» խորագրով հատորով, որուն մէջ ամփոփուեցան Տոքթ. Ռ. Ծեպեճեանի, Դոկտ. Ռ. Պողոսեանի, Մեթր Գ. Տէրտէրեանի, Տոքթ. Գ. Թեմիզեանի, Արմէն Դարեանի, Լեւոն Վարդանի, Անդանիկ Արարատի, Յակոբ Պողոսեանի, Պարոյր Աղպաշեանի եւ ուրիշներու գեկուցումները՝ Մեթր Գ. Տէրտէրեանի Յառաջաբանով եւ խմբագրութեամբ: ՌԱԿ-ի 60-ամեակի (1921-1981) առիթով «ՆՈՐ ՕՐ»-ի լոյս ընծայած «Բացառիկ»-ին մէջ, «Հայ Սփիւռքի վերակազմակերպումը Համահայկական Գաղափարականով եւ Ժողովրդավարութեան Հիմունքներով» խորագիրը կրող իր յօդուածին մէջ, Մեթր Տէրտէրեան կը ջատագովէր՝ համահայկական կեդրոնաձիգ կառոյցի մը մէջ Հայ Սփիւռքը խտացնելու գաղափարը, դէմ դնելու համար՝ Յեղասպանութեան ու Տարագրութեան, նաեւ՝ մեր ներքին հատուածականութեան մեզի պարտադրած նօսրացումին: Ան կը գրէր՝ «Սփիւռքացած Արեւմտահայութեան վերակազմակերպումը՝ կեդրոնական կառոյցի մը մէջ, իբր վախճանական նպատակ ունի՝ ոչ միայն Արեւմտահայաստանի դատին հետապնդումը իրաւագիտական հիմունքներով, այլեւ՝ վերացումը հատուածականութեան, որ երիտասարդութեան մօտ ստեղծած է կեդրոնախոյս տրամադրութիւն ազգային կեանքին հանդէպ, որպէսզի՝ առաւելագոյն թիւով երիտասարդ կենսունակ ուժեր ներգրաւուին մեր ազգային կեանքէն ներս, եւ որպէսզի՝ վերջ տրուի տիրող ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՐԱՊԻՆ... որ ձեռնտու է միայն՝ փառատենչիկներուն, բոլոր հատուածներու անարժան պատեհապաշտներուն, հայ ժողովուրդի «փրկիչ» դառնալու յաւակնորդներուն, եւ՝ տակաւին, այդ ՊԱՐԱՊԸ լեցնելու առիթը չարաշահող գոյնզգոյն օտարամտ խմբակներուն...»:

Եւ, 1990 թուին, հրապարակուեցաւ Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Քոնկրէսի (ՏԱՀՔ) կոչը, որուն իրենց համամտութիւնը յայտնեցին՝ բացի վերեւ յիշուածերէն, նաեւ՝ երեսնեակ մը մտաւորականներ, գրողներ, արուեստագէտներ ու կրթական գործիչներ տարբեր երկիրներէն, որոնց շարքին յիշատակելի են՝ Գալուստ Խանենց (Իրան), Վահէ-Վահեան,

Աշոտ Ալթունեան եւ Ժիրայր Նայիրի (Լիբանան), Դոկտ. Արթուր Պէյլէրեան (Փարիզ), Դոկտ. Ժիրայր Քոչարեան (Միլենիխ), Փրոֆ. Խաչիկ Փիլիկեան (Լոնտոն), Ազնիւ Արապեան, Սրբուհի Տէրտէրեան-Սարգիսեան, Վարուժան Սալաթեան եւ Ազնիւ Գիրիշեան (Սուրիա):

ՏԱՀՔ-ի ծրագրերը մշակողները Տարագիր Հայութեան վերակազմակերպումին համար առաջնորդուեցան հետեւեալ ուղենիշերով.-

- 1- Գտնուելով Երկիր մոլորակին վրայ, եւ ոչ թէ՛ անջրպետին մէջ, իբր յարացոյց որդեգրել՝ Միջագգ. Հանրային Իրաւունքի հիմնարար սկզբունքները, գորս չենք կրնար անտեսել կամ չըջանցել՝ մեր հիմնահարցը հետապնդելու ընթացքին: (Հայերս՝ ընդհանրապէս, կը մոռնանք կամ մոռացութեան կուտանք՝ միջագգ. իրաւունքի հարկադրանքները: Մետասաներորդ ժամուն միայն ոմանք սկսած են խօսիլ իրաւական հիմքերու կարեւորութեան մասին: Այս ուղղութեամբ յիշատակելի է ՀՌԱԿ-ի կուսակցապետ Յարութիւն Առաքելեանի Երեւանի մէջ, 30 Նոյեմբերին (2010) հաստատուած թէ՛ «հայրենազրկման փոխհատուցման գործընթացը հարկ է որ հիմնուած ըլլայ միջագգ. իրաւունքի վրայ»):
- 2- Հայութեան Գոյամարտին երեք ջոկատները՝ Արեւելահայաստ. Տարագիր Արեւմտահայութեան բեկորներ եւ Արցախ, հարկ է բնութագրել իրենց առարկայական եւ իրաւական վիճակներով, միջագգ. իրաւունքին կողմէ ճանչցուած անոնց կարգավիճակներով... առանց շփոթելու ատոնց միջեւ՝ մեր «ՄԷԿ ազգ»ի բնազանցական ու կամայական վերցարկումին (abstraction) պատճառով: «ՄԷԿ ազգ»ը կը մնայ տակաւին չնուաճուած ցանկատեսութիւն...:
- 3- Հեռու մնալ բնազանցական մտածելա-եղանակէն, որուն հակադիտական եւ ինքնախաբէական ուղղութիւններէն մէկն է Շոփենհայտեանի կամապաշտութիւն (volontarisme), որ կ'անդրանցնի մարդու կամքի ուժին բնական սահմանները եւ կը վերածուի արկածախնդրական կոչրութի աղիտալի հետեւանքներով...:
- 4- Չմոռնալ՝ թէ ամէն յաջող գործ կը սկսի անմիջականօրէն, նախ եւ առաջ՝ մասնիկէն, հասնելու համար՝ ամբողջին...: Համահայութիւնը վաղը ներկայացնելիք ամէն կառոյց, կրնայ ստեղծուիլ միայն այն ատեն՝ երբ արդէն կազմակերպուած եւ միաւորուած ըլլան անոր երեք բաղադրիչները...:
- 5- Հեռու մնալ՝ մեզ հաւկուրացնող կամ կարճատես դարձնող ենթակայական-զգացական մտեցումներէն, որոնք մեզ կը տանին

մշուշային-աղօտ (nebulous) պատկերացումներու, եւ՝ ծառը (մասնիկը) կը ծածկէ անտառը (ամբողջը):

Այս գլխաւոր ուղեհիշներուն հետեւելով, ՏԱՀՔ-ի ծրագիրը հետապնդողներս հասանք հետեւեալ եզրայանգումներուն.-

- ա) Համահայուլթեան Գոյամարտի երեք ջոկատներն են՝ Հայաստանի Հանրապետութիւնը (Արեւելահայաստանի), Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը (Արցախ) եւ Տարագիր Արեւմտահայուլթեան բեկորները (Արեւմտահայաստան), որոնք ունին իրարմէ հիմնովին տարբեր կարգավիճակներ միջազգ. իրաւունքին մէջ...:
- բ) Քանի որ, պատմաքաղաքական եւ իրաւական տեսակէտներով՝ Սփիւռքը կը տարբաղադրուի եռակի «սփիւռքներու»՝ 1- Գալիպոլիտեան՝ «ղարիք» եւ տարաբնակ հայերու, 2- յետ-եղեռնեան՝ Տարագիր Արեւմտահայերու բեկորներու, եւ 3- յետ-անկախութեան՝ հայրենաթող, տարաբնակ արեւելահայերու, որոնցմէ միայն թիւ (2) «սփիւռք»ն է Արեւմտահայաստանի հողային դատին գլխաւոր իրաւայաջորդն ու տէրը, որպէս բոնի հայրենագրկեալ հաւաքականութիւն:
- գ) Սակայն, թիւ (2) «սփիւռք»ի Տարագիր Արեւմտահայուլթիւնը՝ որուն անդամները ցիր ու ցան վիճակի մէջ գտնուող իրարու հանդէպ անգամ օտարահպատակներ են, եւ կորսնցուցած կամ աւելի ճիշդը՝ ձեռքէ հանած ըլլալով նախկին «Նանսեմեան անցագիրը», Միջազգ. Հանր. Իրաւունքին կողմէ ճանաչում չունի որպէս «քաղաքական ինքնորոյն հաւաքականութիւն», չունի միջազգային այն կարգավիճակը, զոր ունէր «Նանսեմեան»ով, որ միջազգային ճանաչում վայելող փաստաթուղթ մըն էր եւ Տարագիր Արեւմտահայերու բեկորներուն կուտար «բարոյական» կամ «իրաւական» անձաւորութիւն (personne juridique) եւ հետեւաբար՝ զանոնք ընդունելի եւ լսելի (recevable) կը դարձնէր՝ միջազգային ատեաններու առջեւ, որպէս միջազգ. իրաւունքի ենթակայ (sujet): (Պաղեստինէն տարագրեալ Արաբները մինչեւ օրս ունին «Պաղեստինցի գաղթականի անցագիր»...):
- դ) Հետեւաբար, Տարագիր Արեւմտահայուլթիւնը պէտք է ձեռքբերէ «Նանսեմեան»ը փոխարինող փաստաթուղթ մը, որ կը հաստատէ՝ «քաղաքական ինքնորոյն հաւաքականութեան» մը իր պատկանիլը: Ասիկա կը պահանջէ հիմնովին վերակազմակերպումը Տարագիր Հայուլթեան, որպէս իր հայրենի հողերէն բոնի տեղահանում

Հայրենագուրկ հաւաքականութիւն, եւ անոր օժտումը՝ կեդրոնական, ներկայացուցչական եւ միակ լիազօր կազմակերպութեամբ մը, որ պայմանականօրէն կը կոչուի ՏԱՀՔ, եւ որ կը համապատասխանէ ՊԱԿ-ին (Պաղեստինի Ազատագրութեան Կազմակերպութեան), որուն շնորհիւ միայն Տարագիր Արեւմտահայութեան բեկորները կրնան դառնալ՝ միջազգային կարգավիճակով խումբ:

- ե) ՏԱՀՔ պայմանական անուանումը կարելի է փոխարինել այլ անուանումով մը, սակայն, ՏԱՀՔ-ը՝ ըստ Էոթեան, կը հետապնդէ Արեւմտահայաստանի ազատագրութեան դատը, եւ հետեւաբար, ՏԱՀՔ-ը բաց է՝ անխտիր բոլոր արեւմտահայերուն եւ անոնց սերունդներուն առջեւ: Ուրեմն, ՏԱՀՔ-ի ծրագիրը առաջարկողներս պիտի չգիմենք որեւէ կազմակերպչական մարմինի ստեղծումին, սպասելով՝ որ այս ծրագիրը որդեգրուի բոլոր հոսանքներուն կողմէ...: Որովհետեւ, ՏԱՀՔ-ի նպատակը չէ հակադրուիլ՝ ոչ մէկ հոսանքի, եւ ոչ ալ՝ Համահայութեան միւս երկու ջոկատներուն...: Քանի որ, այս պայմանով է՝ որ ՏԱՀՔ-ը կրնայ դառնալ, Համահայութեան ձեռքին՝ ռազմավարական հօգորութեան անփոխարինելի զէնք մը, միջազգային հարթակի վրայ, ընդդէմ՝ Համահայութեան հասարակաց թշնամի թուրք-թաթարական ճակատին...:

Մեծ եղեռնի դարադարձի (2015) նախօրէին, թէեւ շատ դանդաղ ընթացքով, հայութիւնը տակաւ կը գիտակցի ՏԱՀՔ-ի կամ Սփիւռքի վերակազմակերպումին անհրաժեշտութեան անյետաձգելիութեան:

Ոմանք, անկախաբար՝ Արեւմտահայաստանի դատին հետապնդումէն ալ, անհրաժեշտ կը գտնեն՝ Սփիւռքի վերակազմակերպումն ու կեդրոնական կառոյցի մը ստեղծումը:

Պատմագէտներ Էդիկ Գ. Մինասեան եւ Արարատ Գ. Վարդանեան՝ վերջերս հրատարակած իրենց ժողովածուին մէջ, «Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները ՀՀ անկախութեան տարիներին, 1991-2009» վերնագրով, կը շեշտեն այն միտքը՝ թէ «Սփիւռքի ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՊԱԳԱՆ կրնայ երաշխաւորուիլ՝ Սփիւռքի մէջ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ նոր եւ հօգօր կառոյցի մը ստեղծումով»:

Հռոմի մօտ ՀՀ հաւատարմատար՝ Դոկտ. Գաբրիկ Պաղտասարեան պաշտօնական յայտարարութեամբ շեշտեց՝ թէ «Սփիւռքը՝ ՆԱԽ ԵՒ ԱՌԱՋ, ՄԻԱԽՄԲՈՒԵԼՈՒ Է, որպէսզի կարողնայ դառնալ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՈՒԺ»:

Լիբանանի մօտ ՀՀ նախկին դեսպան Արեգ Յովհաննիսեան, կրկին անդամներ հաստատեց՝ թէ «Հայաստան ԿԱՐԻՔՆ ՌԻՆԻ Հգօր, կազմակերպուած եւ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՓԻՒՌԻ»...:

Տակաւին, աւելի առաջ երթալով, դեսպան Վահան Տէր Ղեւոնդեան կարեւորութեամբ ընդգծեց այն՝ որ «Հայաստանի Հանրապետութեան համար Սփիւռքին հետ համադրուելը ՄԵԾ ՉԱՓՈՎ ԿԸ ՀԵՇՏԱՆԱՅ, եթէ՛ Սփիւռքը ներկայանայ իբրեւ ՄԷԿ ԱՄԲՈՂՁՈՒԹԻՒՆ...»:

Եթէ՛ «Սփիւռքի զարգացման ապագան երաշխաւորելու» եւ «Սփիւռքի կազմակերպուած ուժ դառնալուն» համար, անհրաժեշտ է Սփիւռքի վերակազմակերպումը միասնական կառոյցի մը մէջ, եւ եթէ՛ «Հայաստան ԿԱՐԻՔՆ ունի... ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՓԻՒՌԻ», եւ Հայաստանի «Սփիւռքին հետ համադրուելը ՄԵԾ ՉԱՓՈՎ ՀԵՇՏԱՅՆԵԼՈՒ» նախապայմանն է Սփիւռքին ներկայանալը «ԻԲՐԵՒ ՄԷԿ ԱՄԲՈՂՁՈՒԹԻՒՆ»... ապա ուրեմն Արեւմտահայաստանի դատի հետապնդումին համար առաւել եւս անհրաժեշտութիւն է Տարագիր Արեւմտահայութեան կեդրոնական կառոյցը՝ ՏԱՀՔ-ը, քանի որ Տարագիր Արեւմտահայութիւնն է գլխաւոր իրաւայաջորդն ու տերը Արեւմտահայաստանի դատին...:

Կէս դար առաջ, 1961-ին, պատմագէտ Վարդան Գրիգորեան, Համազգայինի Պէյրութի վարչութեան հրատարակող իր տուած դասախօսութեան ընթացքին, շեշտած է կրկին անդամներ՝ թէ «հայ դատի հետապնդման միակ իրաւական եւ իրական տերը սփիւռքի հայութիւնն է...»: Այս դասախօսութեան անդրադարձած է «Ազգակ» օրաթերթի 2 Մարտ 1961 թուակիր համարի «խմբագրական»ը՝ «Հայ Դատը եւ Սփիւռքի Հայութիւնը» վերնագրին տակ: Թերթի խմբագրութիւնը՝ «Տառացիօրէն բաժնելով այս տեսակէտը» կ'աւելցնէ հետեւեալը.- «...միջազգային իրադրութեան պայմաններն ալ կը թելադրէին սփիւռքի ղեկավարներուն՝ Հայ դատի պահանջները ներկայացնելու յանուն մեր ժողովուրդի ՏԱՐԱԳԻՐ ՀԱՏՈՒԱԾԻՆ», քանի որ «Հայ դատը, ՆԱԽ ԵՒ ԱՌԱՋ, հողերու պահանջն է: Այդ պահանջին ԱՌԱՋԻՆ ԻՐԱԽԱՏԷՐԸ ուրիշ մէկը չէր կրնար ըլլալ, եթէ ոչ՝ սփիւռքի հայութիւնը, ՈՐ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ Է ԱՅԴ ՀՈՂԵՐԷՆ...», պահանջելով՝ որ այդ տեղահանուած ժողովուրդը (իմա՝ Տարագիր Հայութիւնը) մնա՝ միշտ պահանջատէրի դերին մէջ՝ «անվկանդ կորովով եւ հաստատ վճռականութեամբ» («Ազգակ», 2 մարտ 2011):

Յակոբ Պալեան՝ Փարիզի «Նոր Յառաջ» թերթի 26 Յունուար 2010 թուակիր համարին մէջ, «Հայաստանի Հանրապետութեան եւ հայ ժողովուրդի

շահերու շփոթ կայ» վերնագրին տակ գրած յօդուածին մէջ, մատը կը դնէ Տարագիր Արեւմտահայութեան դերը անտեսելու վերջին վրայ եւ կը գրէ՝ «...բռնագրաւեալ Հայաստանը եւ անոր ժողովուրդը Արեւմտահայութիւնը ՈՐՊԷՍ ԱՅԳՊԻՍԻՆ, Հայաստանի Հանրապետութեան «պրագմատիզմ»ին, ենթադրեալ գործնապաշտ քաղաքականութեան մէջ տեղ չունին: Սփիւռքը եթէ այս կացութիւնը ըստ արժանոյն չտեսնէ եւ չգնահատէ՝ կը կնքէ իր լուծարքը, կը թաղէ ազգի իրաւունքները»... «ինչպէս խորհրդային օրերուն, մշտնօրէն շփոթը: Ամբոխավարական ճառի եւ զգացական հայրենասիրութեան մթնոլորտի մէջ, Հայաստանի Հանրապետութիւնը (իմա՝ Արեւելահայաստանը...) ծածկեց Հայաստանը (Արեւմտահայաստանը եւ պատմական Հայաստանը), ինչպէս կը պատահի կարճատեսութեան պարագային, երբ ծառը կը ծածկէ անտառը»... «Զգացական ճառեր կը քնացնեն զանգուածները, մանաւանդ երբ կ'ըսուի «մէկ ազգ մէկ մշակոյթ», «Հայաստանը բոլոր հայերուն հայրենիքն է»՝ առանց ճշդելու թէ խօսքը կը վերաբերի Հայաստանի Հանրապետութեան (Արեւելահայաստանի^o) թէ (պատմական) Հայաստանի»... «Հայաստանի Հանրապետութիւնը (Արեւելահայաստան) միջազգային ճանաչում գտած է որպէս այդպիսին: Հայրենահանուած Արեւմտահայութիւնը եւ Արեւմտահայաստանը միջազգային ոչ մէկ ճանաչում ունին... թէեւ ցարդ ԴԻՄՈՒՄ ԱԼ ԶԷ ԵՂԱԾ, քանի որ ՀԱԻԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ եւ ԿԱԶՄ-ԱԿԵՐՊՈՒԱԾ ԿԱՌՈՅՑ գոյութիւն չունին...», եւ կ'եզրափակէ իր գրուածները հետեւեալ ցաւատանջ հարցումով՝ «Այս հարցերը միթէ ՀԱՄ-ԱՍՓԻԻՌԷԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ մը չե՞ն արժեր, որպէսզի սփիւռքները չմոռնան որ իրաւագրկուած ժողովուրդ են, եւ տէր են իրենց (վերապահուած) իրաւունքի (մը): Այսպիսի նախաձեռնութիւնը՝ զբօսաշրջութենէ, բարեսիրութիւններէ, շքանշաններէ եւ ԲԻԶՆԵՍԷ այլ որակ կ'ենթադրէ: Կը հետամտի՝ ԻՐ ՀՈՒՆԷՆ ԵԼԱԾ ՀԱՅՈՅ ՊԱՏ-ՄՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՀՈՒՆԻՆ ՄԷԶ ԳՆԵԼՈՒ: Իսկ նման առաջարկ կամ խորհրդածութիւն կը նմանին շատախօսութեան կամ մեմախօսութեան, երբ լսողներ չըլլան...»:

Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Քոնկրէսի եւ Սփիւռքը կեդրոնական կառոյցի մը մէջ վերակազմակերպելու գաղափարին շուրջ տարուած լուսաբանական աշխատանքները,- ամբողջ երեսնամեակի մը երկայնքին-, այսօր դադրած են «Հատախօսութիւն» ենթագրուելէ կամ՝ «մեմախօսութիւն» մնալէ... եւ դարձած են բոլորի ուշադրութեան կիզակէտը, եւ ԼՀՀՄ-ի մէջ մեր տեսլապաշտ գործընկերը՝ Յ. Պալեան,

պատճառ չունի այլեւս տազնապելու: Ասիկա այնքա՛ն ճիշդ հաստատում մըն է՝ որ ոմանք, իրաւապատմագիտութեան հետ կապ չունեցող նկատառումներէ եւ հատուածական հաշիւներէ մեկնելով, վերջին ամիսներուն՝ հրապարակ նետեցին հիմնովին հակա-իրաւապատմագիտական ծրագրի մը առաջարկ-փուչիկը... ՀՀ Խորհրդարանը երկպալատ դարձնելու, վերին պալատին՝ Ծերակոյտին (Սենատ) մէջ Սփիւռքը ներգրաւելու նպատակով, խաչածեւելով՝ ՏԱՀՔ-ի իրաւապատմագիտական ծրագիրը, ինչ որ կրնայ պատճառ դառնալ՝ որ պատահի այն, զոր կը քննդատէր Յ. Պալեան, այսինքն՝ «Ամբոխավառական ճառի եւ զգացական հայրենասիրութեան մթնոլորտի մէջ» Արեւելահայաստանի ծառը ծածկէ՝ պատմական Հայաստանի անտառը... (որուն մեծագոյն մասն է Արեւմտահայաստանը), քանի որ «Զգացական ճառերը կը քնացնեն զանգուածները, մանաւանդ երբ կ'ըսուի «մէկ ազգ մէկ մշակոյթ» կամ «Հայաստանը բոլոր հայերուն հայրենիքն է»... առանց ճշդելու թէ խօսքը կը վերաբերի» ներկա՞յ ՀՀ-ին թէ՛ Արեւմտահայաստանին կամ ամբողջ պատմական Հայաստանին...: Այս պատեհապաշտական մշուշապատումը ներկայ Հայաստանի եւ անոր սետղծելիք «Սենատ»ին, կը ստեղծէ «Սենատ»ի եւ ՏԱՀՔ-ի դերերու միջեւ շփոթը, զոր հարկ է փարատել անյապաղ կերպով...:

**Բ.- ՀՀ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ «ՍԵՆԱԹ»ԻՆ ՀԱԿԱԳՐՈՒՄԸ
ՏԱՀՔ-ԻՆ՝ ԲՌՆԱԶԲՕՍԻԿ Է, ԿԱՄԱՅԱԿԱՆ ԵՒ
ՀԱԿԱ-ԻՐԱԻԱՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ:**

«Ազդակ»ի 28 Հոկտ. 2010 թուակիր համարին մէջ՝ «Համահայկական Համարկման մասին» վերնագրին տակ, Դոկտ. Մկրտիչ Մկրտիչեան՝ հակադարձելով ՏԱՀՔ-ի ծրագրին կը գրէր.- «...ոմանք կը միտին սփիւոքը նոր՝ համագաղութային կերպով կազմակերպելու... սփիւոքը՝ ընդդէմ որո՞ւ»: Յայտնօրէն, Մ. Մկրտիչեան կամայականօրէն կ'անգիտանար ՏԱՀՔ-ի հետապնդած երկու կարեւորագոյն հիմնահարցերը՝ Սփիւոքի հայկականութեան պահպանումն ու Արեւմտահայաստանի դատին իրաւագիտական հիմքով հետապնդումը՝ թուրք-թաթարական հասարկաց թշնամի ճակատին դէմ...: Կ'երեւի թէ ան տակաւին կը գտնուի նախա-70ական օրերու հոգեվիճակին մէջ, երբ իր կուսակցութիւնը Սփիւոքը կը հակադրէր Սովետ Հայաստանին... եւ Անթրիխսը՝ Էջմիածնին, եւ հիւանդագին հոգեբանական արտացոլացումով՝ նոյնը կը վերագրէ ՏԱՀՔ-ի կողմնակիցներուն..., ազատագրուած չըլլալով՝ Շոփենհաուերի բնագանցական կամապաշտութենէն: Եւ ան կը պահանջէ՝ «Հայաստանը (°) եւ սփիւոքը պէտք է ընկալել իբրեւ ՄԷԿ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՆ (հայութեան) բաղկացուցիչ երկու (կամ բազմաթիւ) մասերը, ԵՐԲԵՔ իբրեւ ՏԱՐԲԵՐ ԱՄԲՈՂՋՈՒԹԻԻՆՆԵՐ»... այսինքն անտեսենք՝ Արեւելահայաստանի եւ Արեւմտահայաստանի, իրաւաքաղաքական եւ պատմական տարբեր ամբողջութիւններ ըլլալու փաստը, եւ զուտ կամայական ցանկատեսական ապստրահումով (վերցարկումով)՝ զանոնք համարենք «մէկ ամբողջութիւն», առանց անդրադառնալու այս կամայական հրահանգին ազգավնաս հետեւանքներուն: Եւ, շարունակելով կամապաշտութիւնը կը գրէ՝ «Հայաստանի Ազգ. Ժողովի կառուցը ստեղծուած է ՄԻԱՅՆ Հայաստանի տարածքին համար եւ կ'ընտրուի ԲԱՅԱՌԱԲԱՐ Հայաստանի

բնակչութեան կողմէ: Հետեւաբար, ՊԷՏՔ Է ՍՏԵՂԾԵԼ ընտրեալներէ կազմուած երկրորդ կառոյց մը, որ զբաղի բացառաբար համահայկական խնդիրներով (Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններ, հայ-թուրք յարաբերութիւններ, Հայ դատ, եւայլն)... այս երկրորդը՝ ՀԱՄԱՀԱՅ-ԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ (°) կարելի է անուանել ձերակոյտ (սենատ)»...: Բայց թէ ինչն^օ արդեօք պէտք է նԱն ստեղծել Սփիւռքի խորհրդարանը, որ ՏԱՀՔ-ն է, եւ ԱՊԱ ՄԻԱՅՆ՝ «Համահայկական խորհրդարան»ը, ինչ որ աւելի իրապաշտական ու հեզասահ գործընթաց մը պիտի ըլլայ, ան չունի պատասխան: Աւելի ճիշդ՝ ան կը վախնայ, որ Արեւմտա-Հայաստանի դատը հետապնդելու նպատակը ունեցող ՏԱՀՔ-ը ... կրնայ հակադրուիլ Հայաստանի Հանրապետութեան կամ Հայութեան մէկ հատուածին կամ ջոկատին, սակայն չի կարողանար ճշդել՝ թէ «որո՞ւ դէմ»...:

Նոյնպէս բիւրոյական Հրանդ Մարգարեան՝ Թորոնթոյի եւ ապա Պէյրութի մէջ, «սենատ»ի կապակցութեամբ կ'ընէր հակասական յայտարարութիւններ: Թորոնթոյի մէջ («Ազդակ», 13 Դեկտ. 2010) Հրանդ Մարգարեան կ'ըսէր.- «Սփիւռքում այսօր լսուող՝ սփիւռքը առանձնաբար կազմակերպելու, Արեւմտահայաստանի դատին առանձնաբար տէր կանգնելու... ձայները եւ կոչերը ուրախացնում, քաջալերում է ԱՊԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԻՆ, որոնք օր առաջ փորձում են ձերբազատուել ՀԱՄԱՀԱՅ-ԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻՑ: ...Առանձին կառոյց ձեւաւորելով՝ մենք մեր մէջ կը ստեղծենք հարցեր եւ կը հեռանանք համահայկական հարցերից»...: Ասիկա արդեօք ինչպէ՞ս: ՏԱՀՔ-ը՝ հետապնդելով Արեւմտահայաստանի դատը, այդ ինչպէ՞ս է որ հեռացած կ'ըլլայ «Համահայկական հարցերից»...: Այսպիսի ծրագրի մը կողմնակիցները այդ ինչպէ՞ս է որ քաջալերած կ'ըլլան «ապագային տարրերին»: Իսկ եթէ պարզուի՝ որ իսկապէս այդպիսի վտանգ մը կայ, զոր չեն տեսներ ՏԱՀՔ-ի կողմնակիցները, ինչն^օ արդեօք այդպիսի վտանգ տեսնողները իրենք՝ տէր չեն կանգնիր այս ծրագրին, կանխելու համար իրենց տեսած բայց մեր չտեսած վտանգը, երբ մենք դուռը բաց ձգած ենք Տարագիր Արեւմտահայութեան բոլոր, անխտիր բոլոր կենսունակ ուժերուն առջեւ, եւ առ այդ՝ նոյնիսկ չենք կազմած նախաձեռնող մարմին անգամ...: Բայց, նոյնինքն Հ. Մարգարեան քիչ անդին կը խոստովանի՝ թէ՛ «4. Սփիւռքում եւս համամասնական ընտրակարգով ընտրութիւնների կազմակերպումը լուրջ խթան կը հանդիսանայ սփիւռքեան կազմակերպութիւնների համար զբաղուելու՝ անկազմակերպ համայնքներով եւ հայկական ցանցի մէջ առնելով բոլոր այն հայրորդիներին, որոնք այսօր...

հեռու եմ մնում»...: Բայց ինչո՞ւ Հ. Մարգարեան կը կարծէ՝ թէ ՏԱՀՔ-ի կազմակերպումը եւս կրնայ նոյն խթանը չըլլալ...: Արդեօ՞ք՝ «սենստ»-ի կողմնակիցներէն դուրս գտնուող՝ բայց Արեւմտահայաստանի դատին հետապնդումին համար աշխատողները, ՏԱՀՔ-ի կողմնակիցները, «հայ չեն», կամ՝ «ապազգային տարրե՞ր» են...:

Իսկ Պէյրութի մէջ («Ազդակ», 18 Դեկտ. 2010) Հ. Մարգարեան կ'ըսէր՝ «Ժամանակն է ընդլայնել ՄԵՐ ազգային կազմակերպութեան ցանցը, առաջացնել կազմակերպական նոր ձեւեր, եւ ազգի ԱՌԱՆՁԻՆ ՇԵՐՏԵՐԻՆ ինքնակազմակերպուելու ու ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒԵԼՈՒ հնարաւորութիւններ պէտք է տալ...»: Բայց, ինչո՞ւ արդեօք, Հ. Մարգարեան Տարագիր Արեւմտահայութեան ցիր ու ցան բեկորներուն կը զլանայ՝ «ինքնակազմակերպուելու» եւ «ինքնակառավարուելու» հնարաւորութիւնը տալ... միեւնոյն (ապակեղրոնացման) սկզբունքով... երբ՝ Տարագիր Արեւմտահայութիւնը «ազգի առանձին շերտերի(ց)» շատ աւելի մեծ քաղաքական կշիռ մը եւ դերակատարութիւն մը ունի, զոր պէտք է առաւել մեծակշիռ ու ազդեցիկ դարձնել՝ զայն «առանձնակի» վերակազմակերպելով: Այս մեծագոյն հիմնահարցին՝ Արեւմտահայաստանի ազատագրութեան խնդրի առիթով, մեղմագոյն գնահատումով, անլուրջ մօտեցում չէ՞ արդեօք բառախաղը՝ «չերտ»երու, «բաղադրիչ մասերու» կամ «մէկ ամբողջութեան» մասին, երբ՝ իրաւապատմագիտականօրէն անուրանալի եւ անշրջանցելի փաստ է՝ Արեւմտահայաստանի (եւ Արեւմտահայութեան) եւ Արեւելահայաստանի (եւ Արեւելահայութեան), նաեւ՝ ԼՂՀ-ի (եւ Արցախահայութեան) առանձնակի եւ իրարմէ անջատ ու տարբեր ԱՄԲՈՂՋՈՒԹԻԻՆ ՆԵՐ ըլլալու իրականութիւնը, զոր չեն կրնար կամ չեն ուզեր հասկնալ՝ բնազանցական, ապաքաղաքաիրաւական ու հաւաքաբանական մտածողութեամբ վարակուած միտքերը: Բայց, նոյն Հ. Մարգարեանն է, որ ըսած է նաեւ հետեւեալը.- «Այսօրուայ ՄԵՐ անկախ պետականութիւնը շարունակութիւնն է ՄԵՐ կերտած անկախութեան: Եթէ չլինէր 1918 թուականի անկախութիւնը, մեծ հաւանականութեամբ չէինք ունենայ նաեւ այսօրուայ անկախ Հայաստանը: Գուցէ նոյնիսկ չէինք լինի եւ ՄԵՆՔ... Զգիտեմ»...: Միայն բնազանցական մտածողութեամբ անձ մը կրնայ՝ պատմազանցութեամբ եւ կամայականութեամբ ոչ միայն իր միտքին մէջ միայն միաւորել Համահայութիւնը եւ պատմական Հայաստանը կամապաշտական վերցարկումով (ապստրահումով), այլեւ ցատկել՝ Հայոց Պատմութեան շղթայի օղակներէն ոսկեայ մէկ օղակին վրայէն, որ ՀԱՅԿԱԿԱՆ (ոչ՝ «Հայաստանի») սովետական սոցիալիստական

70-ամեայ հանրապետութիւնն է, որ հզօրագոյն կամուրջը հանդիսացաւ երկուքուկէսամեայ Ա. հանրապետութեան ու ներկայ Գ. հանրապետութեան միջեւ..., եւ՝ գոյութիւն չէր կրնար ունենալ այս Գ.ը... եթէ գոյութիւն ունեցած չըլլար՝ Ա.էն եւ Գ.էն անհամեմատօրէն ատլի հզօր ու հաշարդոյմ Բ.ը, համաձայն պատմական միտքին ու տրամախոհական մտածելակերպին:

Իսկ «Ազդակ»ի 2011 թ. ամանորեան «Բացառիկ» համարին խմբագրականին մէջ ըստուած էր՝ «Համասփիոքեան կառոյցներու ձեւաւորման նախաքայլերը կը նպատակադրէին ներկայացուցչական մարմիններու ստեղծումը: ...Կարելոր յիշեցումը պիտի ըլլայ այն, որ որեւէ ձեւով ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ եւ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ԱՆՋԱՏ գործող կառոյցներու պէտք չէ յանգին այս փորձերը: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ հետ համախորհուրդ, համակարգուած եւ նպատակաւորուած առանցքային գիծն է, որ պարտի տիրական ըլլալ նման աշխատանքներու ուղեգիծներուն վրայ»: Ասիկա աննախապաշար, անկասկածամիտ, շրջահայեաց զգօնութեան հրաւէր մըն է, բայց զուրկ չէ բնագանցական պատրանասիրութեան: Այստեղ «Հայրենիք» եւ «Հայաստանի պետութիւն» ըսելով՝ թերթի խմբագրութիւնը կրնայ միայն ակնարկած ըլլալ ՀՀ-ի մէջ տիրող ներկայ իշխանութիւններուն, քանի որ պետութիւնը կայացած չէ տակաւին...: Իսկ հոն տիրող ներկայ իշխանութիւններուն հետ Սփիւռքի մասնաւորաբար՝ Տարագիր Արեւմտահայութեան լուրջ տարակարծութիւնը անխուսափելիութիւն մըն է, հոն տիրող անարգար, անտեսական, օլիկարխային-ապագային համակարգին պատճառով... Ինչպէս եղաւ Յիւրիխեան փրոթոքողներուն առիթով, երբ Սփիւռքի ջախջախիչ մեծամասնութիւնը իրաւացիօրէն մերժեց գործել այդ իշխանութիւններուն հետ՝ «համախորհուրդ» եւ «համակարգուած» կերպով, որովհետեւ՝ պարզապէս, բացարձակ անկարելիութիւն էր այդ, եւ ուրեմն հակադրուեցաւ՝ հոն տիրող իշխանութիւններուն, եւ՝ ոչ ոքի արտօնուած է, այդ հակադրութեան վերագրել՝ «Հայրենի պետութեան դէմ գործելու» մտադրութեան «մեղք»...: Հետեւաբար, բնագանցական պատրանասիրութիւն է՝ ներկայ Արեւելահայաստանի Գ. հանրապետութեան մէջ տիրող իշխանութիւնը դիտել որպէս՝ ամբողջական Հայրենիք եւ ամբողջական Հայաստանի Պետութիւն, այլ հարկ է յստակօրէն (գիտականօրէն) զատորոշել իրարմէ՝ Արեւմտահայաստանը, Արեւելահայաստանը եւ այս երկրորդին պետութիւնը՝ հոն տիրող իշխանութիւններէն...:

Պահելով ժամանակագրական կարգը, յիշենք՝ որ 2011 թ. Յունուարի վերջերուն, ՀՀ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան եկաւ՝ ՀՀ

նախագահին անունով, պաշտօնապէս երկրորդելու ՀՅԴ-ի բանբերներու առաջարկը՝ ՀՀ Ազգային ժողովին կողքին «սենատ» ստեղծելու մասին...: Ան Լոս-Անճելեսի մէջ ըսաւ.- «Հանրապետութեան նախագահը... եկել է եզրակացութեան, ...որ այո՛, պէտք է Հայաստանի պետական կառավարման համակարգում լինեն որոշակի փոփոխութիւններ, որոնք կարող են սփիւռքահայերին հնարաւորութիւն տալ մասնակցելու պետական կառավարմանը...: Առաջին քայլը՝ նախագահի կողմից այն էր, որ ստեղծուեց ՍՓԻԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ, ...երկրորդը՝ ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԻՒՆ ինստիտուտը, ...երրորդ քայլն ենք անում՝ ստեղծելով ՎԵՐԻՆ ՊԱԼԱՏ (սենատ), որով ՍՓԻԻՌՔԱՀԱՅԸ իր ձայնը, խօսքը կ'ունենայ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, քաղաքականութեան մշակման եւ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ գործում»... (բոլոր ընդգծումները մերն են):

Այս գրաւիչ ու շողշողուն գեղումները ո՞րքանով կապ ունին արդեօք՝ պետական մտածելակերպի իրաւաքաղաքագիտութեան, տրամախոհական պատմամտածողութեան եւ գիտակցական (ոչ զգացական) հայրենասիրութեան հետ...: Պարզ է թէ՛... ոչ մէկ: Ընդհակառակը:

Այս երեք քայլերով՝ ատոնց պետական ու կուսակցական հեղինակները, ինքնախաբէտութիւնը կ'ունենան երեւութապէս միայն իրականացուցած ըլլալու «մէկ ազգ մէկ պետութիւն» գրաւիչ երա՛զը... զոր միայն երկարաշունչ պայքարով մենք պիտի կարողանանք իրականացնել հեռու ապագային...: Անոնք չեն անդրադառնար արդեօք, որ այս երեք քայլերը առնելով՝ փաստօրէն, գործնականին մէջ, աստիճանական մոռացութեան եւ շիջումի մատնած կ'ըլլան Արեւմտահայաստանի յիշողութիւնը...: Անոնք չեն անդրադառնար նաեւ՝ որ այսպիսով, կամայ թէ՛ ակամայ, անկարելի դարձուցած կ'ըլլան Արեւմտահայաստանի դատին հետապնդումը՝ միջազգային իրաւունքի սկզբունքներուն բերումով...:

Այստեղ պէտք է վերյիշեցնենք՝ այն խիստ կարեւոր եւ նշանակալից մեկնաբանութիւն - լուսաբանութիւնը, զոր տուաւ Հայաստանի նախագահի մամլոյ բանբերը՝ Արմէն Արզումանեան, Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի այս գեղուն յայտարարութեան, որպէսզի աւելի յստակօրէն հասկնանք այդ յայտարարութեան բուն իմաստը եւ իսկական բովանդակութիւնը: Արմէն Արզումանեան կը հաստատէ՝ թէ՛ Հրանուշ Յակոբեանի յայտարարութիւնը պարզապէս կը նպատակադրէ «Հայաստան - սփիւռք կապերի ընդլայնումը...», որուն եղանակներուն փնտռտուքը որոշուած էր՝

2010 թ. Մայիսին կայացած «Հայաստան» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ... Հոգաբարձուներու խորհուրդի նիստին մէջ: («Ազդակ», 1 Փետր. 2011): Ուրեմն, «սենատ»ի առաջարկին տուն տուողը Հիմնադրամի Գերակա մտահոգութիւնն է՝ «Հայաստան-սփիւռք կապերի ընդլայնում»ով... Եւ բնա՛լ կապ չունի, իր իսկութեան մէջ, Արեւմտահայաստանի դատի հետապնդումին եւ նման համահայկական հիմնահարցերու հետ...: «Եւ՛ լեռը ծնաւ... մուկն չնչին»:

Հետեւաբար, Հրանուշ Յակոբեանի յայտարարութիւնը լուրջի առնելու փութկոտութիւնը, որ ցուցաբերեց Սփիւռքը, անտերի էր: Սակայն, մենք կրնանք քննարկել «սենատ»ի առաջարկը շատ աւելի լուրջ մտահոգութիւններով՝ պարզապէս, իրաւաքաղաքական բանավէճի սիրոյն:

Պարոյր Աղպաշեան կը գոհանայ ցոյց տալով՝ նման «սենատ»ի մը ԿԱՆԽԱՀԱՍՈՒԹԻՒՆԸ միայն, եւ 21 Փետ. 2011-ին, keghart.com կայքէջին վրայ կը գրէ.- «Կասկած չկայ, խիստ ԿԱՆԽԱՀԱՍ Է՛ պետական կառավարումի համակարգին մէջ այս առաջադրանքին («սենատ»ի) շրջանառութիւնը... Թէ՛ Հայաստանի իշխանութիւններուն, թէ՛ մանաւանդ սփիւռքահայութեան համար», երբ տակաւին «Հայաստանի իշխանութիւնները եւ յատկապէս նախագահը... ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ունի պարտաւորութիւններ իր երկրին ու ժողովուրդին հանդէպ, տնտեսական բարելաւումէն մինչեւ... ապրուստային բարեկարգումները, հասնելով՝ ԻՍԿԱԿԱՆ ժողովրդավարութեան»... զօրացնելու համար «ժողովրդային զանգուածներու վստահութիւնը երկրի ապագայի նկատմամբ, նուազեցնելու եւ վերացնելու համար ԱՐՏԱԳԱՂԹԻ պատճառները»...: Եւ կը շարունակէ՝ «Ինչպէ՞ս կարելի է խօսիլ» Ազգային ժողովը «սենատ»ով մը լրացնելու մասին, «երբ ներկայ Ազգ. ժողովը ինք պէտք ունի վերակառուցուելու»... ապահովելու համար անոր անդամներու «արժանաւորութիւնը, հեղինակաւորութիւնը եւ վստահելիութիւնը», եւ երբ՝ Սփիւռքը եւս, ցարգ չէ լուծած «իր ներքին հիմնահարցերը...: Եւ այս պայմաններուն մէջ, Սփիւռքը ոչ թէ միայն չի կրնար, այլեւ՛ իրաւունք չունի նման «ովկիանոս»ի մէջ նետուելու եւ... խեղդուելու»...: Յստակ է եզրակացութիւնը՝ թէ՛ նախ եւ առաջ, անհրաժեշտ է՝ վերակազմակերպել Սփիւռքը կեդրոնական կառոյցի մը մէջ, եւ վերակառուցել Հայաստանի համակարգը, նախքան «սենատ»ի մասին խօսիլը:

Նոյնինքն ՀՅԴ Խորհրդարանական խմբակցութեան քարտուղար Արտաշէս Շահբազեան, հարցին պահանջած շրջահայեացութեան եւ մեծ զգուշաւորու-

Թեան գիտակցելով կ'ըսէ՝ «...հարցը այնպէս պէտք է լուծուի որ յօնք շտկելու փոխարէն աչքը չհանուի: ...Բաւական է անգոյշ մօտեցում դրսևորել, եւ ՍՓԻԻՌՔԸ ՈՐՊԷՍ ՄԷԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ փոխարէն՝ կարելի է հեշտութեամբ պառակտել շատ ու շահ մասերի»: Հետեւաբար, Սփիւռքը որպէս մէկ միասնական ամբողջութիւն ներկայացնելու համար՝ նախապայման է Տարագիր Արեւմտահայութեան կեդրոնական, ներկայացուցչական եւ միակ լիազօր մարմինին (ՏԱՀՔ-ի) ստեղծումը:

ՏԱՀՔ-ին հակադրուող կանխահաս «սենատ»ին ջատագովները՝ մեծ շուտիկութեամբ, կը թերզնահատեն Տարագիր Արեւմտահայութեան ունեցած տեսակարար կշիռին տարողութիւնը եւ կը փորձեն դայն ԿՅՈՐԴԵԼ «սենատ»ին: Մինչդեռ թշնաի Թուրքիան՝ ճիշդ գնահատելով Տարագիր Արեւմտահայութեան իսկական կշիռն ու դերը... համոզուած է թէ՛ «հայ ժողովուրդին հասնելու համար պէտք է երկխօսութիւն ծաւալել Սփիւռքի հայութեան հետ»...: Արդարեւ, «Սապահ» թերթի փոխանցմամբ (3 Մարտ 2011), «Թուրքիոյ Ազգ. Անվտանգութեան Խորհուրդի Անտի, որոշում կայացաւ Հայ-Թրքական արձանագրութիւններուն առկախում պարտադրած Սփիւռքի ընդդիմութիւնը վերացնելու համար, շփումներ հաստատել հայկական Սփիւռքի հետ, եւ մասնակցիլ Սփիւռքի կողմէ կազմակերպուելիք ոգեկոչումի ձեռնարկներու, քանի որ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԾԱԽԱԼԵԼ ԸՍՓԻԻՌՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ»: Բայց ո՞ր է Սփիւռքը (իմա՝ Տարագիր Արեւմտահայութիւնը...) ներկայացնող ՏԱՀՔ-ը, որպէսզի տիրութիւն ընէ Սփիւռքի հայութեան, որպէս կեդրոնական, ներկայացուցչական եւ միակ լիազօր ղեկավար մարմին, եւ՝ կողմնորոշէ, պայմաններ դնէ եւ վերահսկէ ամէն նման շփումներու...:

Ներելի՞ է արդեօք, որ մենք հայերս, շարունակելով իրաւագիտական մեր ձմեռնաքունը, մեր ներուժը սպառենք՝ Յեղասպանութեան լոկ բարոյական, ապաքաղաքական անպտուղ ճանաչումի ճամբուն վրայ, կամ՝ «հայաստանակեդրոնութեան» թիւրիմացուած նշանաբանին համար եւ կամ՝ ՀՀ խորհրդարանը «վերին պալատով» («սենատ»ով) օժտելու անհեռանկար ու խիստ վտանգաւոր պատեհապաշտական արկածախնդրութեան համար, փոխանակ՝ անյետաձգելի առաջնահերթութիւնը տալու Արեւմտահայաստանի ազատագրութեան քաղաքական ու ռազմավարական մեծ նշանակութիւն ունեցող գէնքին, մոռնալով կամ գիտակցօրէն մոռացութեան տալով այն փաստը, որ Արեւմտահայաստանի հարցերու ուսումնա-

սիրութեան կեդրոնի տնօրէն Հայկազ Ալվրցեան, պնդելով՝ որ «Այսօր աւելի շատ հայութիւն ունինք Արեւմտահայաստանի մէջ քան Հայաստանի Հանրապետութեան» (իմա՝ Արեւելահայաստանի մէջ): Եւ եթէ նկատի ունենանք նաեւ Տարագիր Արեւմտահայութեան թիւին գերազանցութիւնը ՀՀ-ի մնացած բնակչութեան թիւին վրայ... յօդս կը ցնդի այն թերահակատութիւնը՝ Արեւմտահայաստանի դատի ապագային շուրջ, որ ջլատած է՝ դժբախտաբար, հայ ղեկավար աթոռներու «գահակալ»ներու քաղաքական կամքը...: Այս վերջինները կը մոռնան կամ մոռացութեան կուտան նաեւ Թուրքիոյ ինքնութեան սուր տազնապը, իր տարատնկեալ եւ բնիկ այլ ժողովուրդներու հայրենի հողին վրայ պարտադրուած պետութիւն մը ըլլալուն պատճառով, ուր՝ մեծամասնութիւնը բնակչութեան ոչ-թուրքերէ կազմուած է, եւ այս ոչ-թուրք այլ թուրքիացի ժողովուրդները («Թիւրքիւլի»ները՝ Հրանդ Տինքի բառով) այսօր կ'ապրին նոր զարթօնք մը, եւ անոնցմէ ոմանք՝ ինչպէս քիւրտերը ու ալեւիները համարձակօրէն կը մղեն ազատագրական ու դեմոկրատական իրաւունքներու սուր պայքար մը, որուն կը զօրակցին նաեւ՝ յառաջդիմական, կոմունիստ եւ իսկական դեմոկրատ բուն թուրքերը...: Յիշենք Կ. Պոլսոյ պատրիարքական տեղապահ Արամ Արք. Աթէշեանի խօսքը՝ Վանի մէջ հանդիպելով իր զարմիկներուն (Մեսուրէ Բափլան եւ Ճիհան Պեսքիսիզ անունով), որոնք վերագարձած են իրենց հայկական արմատներուն, թէ՛ «Երբ վախի մթնոլորտը վերանայ երկրին մէջ եւ ժողովրդավարութիւնը զարգանայ հոս, պիտի պարզուի, որ Անատոլիոյ մէջ կան հազարներով հայեր»: Եւ Թուրքիոյ ֆաշական ու ցեղապաշտական համակարգին դէմ եւ ի խնդիր դեմոկրատական վարչակարգի հաստատման կը պայքարին այսօր՝ թուրք եւ ոչ-թուրք բոլոր արմատական «Ձախ» ուժերը, Թուրքիոյ Կոմկուսի առաջնորդութեամբ, կողք-կողքի՝ նեցակցելով Թուրքիոյ իրաւագրկուած բոլոր ժողովուրդներուն...:

ՏԱՀԲ-ի՝ Տարագիր Արեւմտահայութեան հողային պահանջատիրութեան քաղաքական ու ռազմավարական հզօր եւ անփոխարինելի գէնքէն հաւասարապէս կ'օգտուին Համահայութեան Գոյամարտին երեք ջոկատները (Արեւմտահայութիւն, Արեւելահայութիւն եւ Արցախահայութիւն), քանի որ այս գէնքը իբր թիրախ ունի՝ թուրք-թաթարական թշնամի միացեալ ճակատը միայն...:

Իրաւագէտ Արա Պապեան կը գրէ՝ «պետական միաւորները գոյութիւն ունեն, քանի դեռ տուեալ պետութեան եւ նրա հաւանական հակառակորդների միջեւ առկայ է ՈՒԺԵՐԻ ՀԱՒԱՍԱՐԱԿՕՒՈՒԹԻՒՆ: Ուզում եմ

յատուկ շեշտել որ ՌԻԺ ասածը նույնական չէ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԶՕՐՈՒԹԵԱՆ: Ռազմական հզորությունը ՌԻԺի կարևոր բաղադրիչ է, բայց ՄԷԿՆ է միայն՝ մի շարք բաղադրիչներից: Ուրեմն այն հարցին թե ինչպե՞ս կարելի է պահպանել ՌԻԺԵՐԻ ՀԱԻԱՍԱՐԱԿԳՌՈՒՌԻԻԻՆԸ մի կողմից ԼՂՀ-ՀՀ, եւ միւս կողմից Ազրայէյնանի եւ Թուրքիայի միջեւ, երբ կողմերի ՌԱԶՄԱԿԱՆ ՀԶՕՐՈՒԹԻՒՆԸ էականօրէն տարբեր են... եւ մենք ԶԻԶՈՒՄ ԵՆՔ մեր հակառակորդներին, մենք կը պատասխանենք՝ թէ ՌԻԺԵՐԻ ՀԱԻԱՍԱՐԱԿԳՌՈՒՌԻՒՆԸ յարաբերական հասկացութիւն է եւ եթէ դու ի վիճակի չես ամբողջական հաւասարակշռութեան հասնել՝ ինքդ ՆՈՅՆՔԱՆ ՀԶՕՐԱՆԱԼՈՎ, ապա պիտի գնաս այլ ճանապարհով, ՊԻՏԻ ՏԿԱՐԱՑՆԵՍ քո հակառակորդին: Հակառակորդն ՏԿԱՐԱՑՆԵԼՈՒ տարբեր ձեւեր կան...»: Ահա այդ ձեւերէն մէկը կրնայ ըլլալ օգտագործել՝ հակառակորդ երկու պետութեանց, Թուրքիոյ եւ Ազրայէյնանի ՈԶ-ՄԻԱՏԱՐՐ բնակչութիւն ունենալու պարագան, այս պետութեանց մէջ մեծաթիւ այլազգի բնիկ ժողովուրդներու գոյութեան փաստը: Այլազգի մեծաթիւ բնիկ ժողովուրդներ, որոնք տառապելով այդ պետութեանց բռնատիրական լուծեու ներքեւ, պատրաստ են կոուելու այդ լուծերուն դէմ...: Հոս է որ մեծ նշանակութիւն կը զգենու հոն գտնուող հայ բնիկ ժողովուրդին ալ ազատագրութեան լծակին օգտագործումը՝ տկարացնելու համար հակառակորդ երկու պետութիւնները, որպէսզի կարողանանք պահպանել ուժերու հաւասարակշռութիւնը ԼՂՀ-ՀՀ եւ Թուրքիա-Ազրայէյնան ճակատներուն միջեւ...:

Այլ խօսքով, Հայութեան բոլոր ուժերը պէտք է կեդրոնացնել՝ թուլացնելու համար մեր հակառակորդները ներքնապէս, զոր իրականացնելու համար անհրաժեշտ ազդեցութեան հզոր լծակ մըն է՝ Արեւմտահայութեան հողային պահանջատիրութիւնը, որ մեզմէ կը պահանջէ ՏԱՀՔ-ի ստեղծումը՝ միջազգային իրաւունքի սկզբունքներուն համաձայն: Զմոռնանք՝ որ տարագիր արեւմտահայութիւնն ու երկրի «ծպտուած» հայերը կը կազմեն ոչ արհամարհելի միլիոններ...: Հետեւաբար, քաղաքական անհեթեթութիւն է կարծել՝ թէ Տարագիր Արեւմտահայութեան վերակազմակերպումն ու խտացումը ՏԱՀՔ-ի կառոյցին մէջ, եւ ասոր միջազգային կարգավիճակ ձեռքբերելու քաղաքական կամքը, կրնայ որեւէ ձեւով հակադրուիլ ՀՀ-ին կամ ԼՂՀ-ին: Ընդհակառակը, ինչպէս տեսանք՝ ՏԱՀՔ-ի ստեղծումը քաղաքական ու ռազմավարական հզոր լծակ մըն է նաեւ՝ ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի համար, ներքնապէս տկարացնելու՝ հասարակաց թշնամի ճակատը..., պահպանելու համար ուժերու հաւասարակշռութիւնը Հայութեան եւ

Թուրք-Թաթարական ճակատներուն միջև:

Վերջապէս յիշեցնենք թէ ըլլայ երկքաղաքացիութիւնը եւ ըլլայ «սենատ»ը, ոչ միայն չունին յաջող գործադրութեան հեռանկարներ, այլեւ՝ կը խափանեն Արեւմտահայաստանի դատին իրաւագիտական ֆետապնդումի ճամբան:

Այդ երկու քայլերուն յաջող գործադրութեան հեռանկարներու չգոյութեան մասին գրեցին շատ մը մտաւորականներ՝ Հայաստանէն եւ Սփիւռքէն հաւասարապէս: Յարութ Սասունեան թուեց 10 լուրջ պատճառներ («Արարատ», 13 Փետրուար 2011), իսկ «Ժարանգութիւն» կուսակցութիւնը ուժգնօրէն դէմ արտայայտուեցաւ այդ քայլերուն, եւ նոյնիսկ Հայ Ազգային Գոնիւրէսը «սենատ»ի ծրագիրը յորջորջեց՝ «անհեթեթութիւն» (արսուրտ):

Մենք չենք ուզեր անդրադառնալ «սենատ»ի յաջող գործադրութեան անկարելիութեան՝ գործնական, քաղաքական եւ միջազգային իրաւական պատճառներուն, այլ կ'ուզենք շեշտը դնել եւ առաջնահերթութիւնը տալ՝ երկքաղաքացիութեան եւ «սենատ»ի ազգավնաս ֆետեւանքներուն, զորս աւելի կարեւոր կը նկատենք:

Տարագիր Արեւմտահայութիւնը «սենատ»ին մէջ ներկայացնելու նախապայմանն է երկքաղաքացիութիւնը...: Եւ երբ Արեւելահայաստանի Գ. Հանրապետութիւնը քաղաքացիութիւն տայ Տարագիր Արեւմտահայութեան բեկորներուն, այս վերջինները կը դադրին ՀԱՅՐԵՆԱԶՈՒԻԿ նկատուելի՝ միջազգային իրաւունքի սկզբունքներուն համաձայն, եւ կը զրկուին՝ բոնի կերպով հայրենահանգեալ ժողովուրդի գէնքէն, այսինքն՝ զաւթեալ Արեւմտահայաստան վերադառնալու անկապտելի իրաւունքէն, քանի որ Արեւելահայաստանի քաղաքացիութիւնը առնելով՝ անոնք իրենց ազատ կամքով ընտրած կ'ըլլան իրենց հայրենիքը... Արեւելահայաստանը: Իսկ միջազգային իրաւունքը անհատին իրաւունք կուտայ ունենալու մէկ հայրենիք, եւ ոչ թէ՛ հայրենիքներ, ուրեմն անոնք կը դադրին հայրենագուրկ նկատուելի... եւ Արեւմտահայաստան կը զրկուի իր իրաւայաջորդէն, եւ իր դատին տէր կանգնող ժողովուրդէն...: Այս պարագան լաւապէս ըմբռնելու համար, հարկ է յիշել՝ պաղեստինցի տարագրեալներու դաւաճումի հարցը: Եթէ պաղեստինցի տարագրեալները («գաղթականներ») ընդունին՝ արարական երկրի մը քաղաքացիութիւնը, կը կորսնցնեն Պաղեստին վերադարձի իրենց իրաւունքը...: Եւ Պաղեստինը զաւթած սիռանական տարատնկեալ պետութիւնը՝ Իսրայէլ, պատրաստ է տասնեակ միլիառներ վճարելու այս «գաղթականներ»ուն եւ զանոնք ընդունող Արաբ պետու-

Թիւններուն, քանի որ այս ձեւով, – դաուրիւն-ով – , լուծարուած կ'ըլլայ Պաղեստինեան Հարցը, նաեւ՝ ՊԱԿ-ը (Պաղեստինի Ազատագրութեան կազմակերպութիւնը), եւ Իսրայէլ՝ վերջնապէս զաւթած կ'ըլլայ Պաղեստինը եւ ազատած՝ Պաղեստինեան Հարցի գլխացաւանքէն...: Զուգահեռաբար, երբ Տարագիր Արեւմտահայութիւնը՝ իր ազատ կամքով, ընտրած ըլլայ Արեւելահայաստան կոչուող հայկական երկրի քաղաքացիութիւնը, լուծարուած կ'ըլլայ Արեւմտահայաստանի դատը եւ ՏԱՀՔ-ը...: Նոյնպէս՝ երբ Արցախէն Արեւելահայաստան փախստական հայերը ընդունելու ըլլան ՀՀ քաղաքացիութիւնը, հրաժարած կ'ըլլան Արցաքի դատէն: Ալիւել չէ՞ր որ յայտարարեց՝ թէ արցախահայերը ունին իրենց հայրենիքը, Հայաստանի Հանրապետութիւնը, որ անկախացած է... եւ ուրեմն չունին ազգային ինքնորոշումի հարց մը...:

Երկքաղաքացիութեան «ինստիտուտ»ը (Հրանուշ Յակոբեանի բառերով) եւ վերին պալատը («սենատ») արդիւնք են պրագմատիզմի ՀԱՄԱԿԵՐՊՈՂԱԿԱՆ տարբերակին՝ պատմական կատարուած փաստին հլու հնազանդ համակերպելու եւ պատմական իրաւունք մոռնալու պատեհապաշտ փախուստին, որ գլխովին ներհակ է պրագմատիզմի ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ տարբերակին, որ կը մեկնի միեւնոյն պատմական փաստի իրականութենէն, եւ սակայն կը պայքարի տիրող իրավիճակը վերափոխելու համար...: Համակերպողական բնոյթով այս երկու քայլերը կը վկայեն՝ թէ զանոնք առնողներուն մօտ գոյացած է լուելեայն հաւանութիւն տիրող իրավիճակին, եւ կը մատնեն անոնց թերահաւատութիւնը՝ տիրող իրավիճակի վերափոխումի կարելիութեան հանդէպ: Հետեւաբար, անոնք չեն փնտռեր իսկ վերափոխելու միջոցներ կամ եղանակներ, այլ կը փորձեն կարկտաններ եւ անհետեւ ծրագրեր մշակել, զանոնք շարեւելով շողշողուն ու գրաւիչ գեղումներով, կարծելով՝ թէ այդպիսով «բարելաւած» կամ «թեթեւցուցած» կ'ըլլան տխուր իրավիճակը, առանց անդրադառնալու (արդե՞օք...) իրենց մշակած ծրագրերուն ազգամաս հետեւանքներուն, որոնց մեծագոյնն է՝ Արեւմտահայաստանի աստիճանական մոռացումը մինչեւ կորուստ, վերջնականապէս: Անոնք՝ Տարագիր Արեւմտահայութեան բեկորները կլանելով Յեղասպանութեան լոկ բարոյական, ապաքաղաքական ճանաչումի եւ «Արեւելահայաստանակեդրոն» աշխատանքներու ցուցադրական եւ զգացական հայրենասիրութեան հոսանքին մէջ, գործնապէս (կամայ թէ ակամայ) զանոնք կ'ապակողմնորոշեն կամ կը շեղեն իրենց աւագ պարտականութենէն, որ է՝ Տարագիր Արեւմտահայութեան վերակազմակերպումն ու օժտումը միջազգային կարգավիճակով (ՏԱՀՔ-ի ճամբով), որպէսզի ան

տէր կանգնի Արեւմտահայաստանի դատին՝ միջազգային իրաւական հանգամանքով: Ահա այս է, զոր կ'առաջարկեն փրակմաթիզմի ՅԵՂԱ-ՓՈՆԱԿԱՆ տարբերակին կողմնակիցները, որպէսզի՝ հայրենահանեալ Արեւմտահայութեան բեկորները չզրկուին իրենց հայրենագուրկի հզօրագոյն գէնքէն, որուն քաղաքական ուժէն եւ ռամավարական լծակէն՝ կրնան օգտուիլ՝ եթէ կամենան..., Համահայութեան Գոյամարտի բոլոր երեք ջոկատները՝ Արեւմտահայութիւն, Արեւելահայութիւն եւ Արցախահայութիւն, հաւասարապէս՝ թուրք-թաթարական թշնամի ճակատի տկարացումին համար, ինչպէս տեսանք, եւ՝ Հայութեան իրաւունքները արժեցնելու համար, միջազգային գետնի վրայ եւ ատեաններու առջեւ:

Պարզէն ալ պարզ է՝ թէ ՏԱՀՔ-ի ճամբով վերակազմակերպուած ու խտացած, եւ միջազգային կարգավիճակ ձեռքբերած Արեւմտահայութեան բեկորներն են միայն, որ պիտի կարողանան՝ դեմոկրատականօրէն ընտրեալ ներկայացուցիչներ գործուղել ապագային կազմաւորուելիք «Համահայկական խորհրդարան», շատ աւելի հեզասահ կերպով, շատ աւելի ճանաչում ձեռք բերած իրաւական հանգամանքով, եւ շատ աւելի ազգօգուտ եղանակով եւ արդիւնքներով...: Ասիկա պետական մտածելակերպի հրահանգն է: Բայց, ցաւ ի սիրտ, Արեւելահայաստանի Գ. դրամատիրական Հանրապետութեան իշխանաւորները շատ հեռու են պետական մտածելակերպէ, քանի որ կլանուած են բիզնէս-ով եւ միջ-օրիկարիսային մրցավազքով...: Եւ հոգն՝ ուր չկայ պետական մտածելակերպ, չկայ եւ կայացած պետութիւն, ինչպէս կը հաստատէ նաեւ մշակութաբան ակադեմական Վ. Զալոյեան: Եւ ուրեմն, Մեծ Եղեռնի դարադարձի (2015) այս նախօրէին անգամ եթէ չենք կրցած իրականացնել, կայացնել ՏԱՀՔ-ը, կը նշանակէ՝ թէ Սփիւռքի մեր ղեկավարները եւս զուրկ եղած են պետական մտածելակերպէ, իրենց իրաւաքաղաքագիտութեան եւ՝ ծառի ետեւի անտառը տեսնելու անկարողութեան հետեւանքով...:

Եզրափակելու համար, Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Քոնկրէսին՝ (ՏԱՀՔ-ին) Տարագիր Արեւմտահայութիւնը իր հայրենահանեալի (եւ հետեւաբար Արեւմտահայաստան վերադառնալու իրաւատէրի) գէնքէն զրկող «սենատ»ը հակադրողները կը տառապին հետեւեալ թերութիւններէն՝

- 1- Իրաւաքաղաքագիտական պատրաստութեան անբաւարարութիւն.
- 2- Պետական մտածելակերպի անատակութիւն.
- 3- Ծառի ետեւի անտառը տեսնելու անկարողութիւն (կարճատեսութիւն).
- 4- Բնագանգական, կամապաշտական մտածելաեղանակ.

- 5- Մանր քաղքենիական պատեհապաշտութիւն եւ պատրանասիրութիւն.
- 6- ԱրեւմտաՀայաստանի Հանդէպ պատասխանատուութեան անգոհացուցիչ գիտակցութիւն.
- 7- Համահայկական՝ լայնահորիզոն, երկար շունչի եւ հաւաքական կարգապահ աշխատանքի անպատրաստակամութիւն.
- 8- Փրակմաթիզմի յեղափոխական տարբերակէն փախուտ տալու ապաւինողականութիւն, համակերպողականութիւն եւ քաղաքական անչափահասութիւն.
- 9- Եւ՝ սեփական ժողովուրդին ներուժը արհամարհելու հետեւանքով՝ քաղաքական կամքի անգօրութիւն:

Հայաստանի Մարդու Իրաւունքների եւ Ժողովրդավարութեան Ինստիտուտի (ՄԻԺ) հրատարակած Հանդէսի վերջին համարին մէջ, լոյսին եկած է՝ «Որակապէս վերափոխուելու եւ Կազմակերպուելու Ժամանակն է» վերնագրով գրութիւն մը, որուն մէջ՝ Հայաստանի Հանրապետութեան (Արեւելահայաստանի) ապագային շուրջ, հետեւեալ հարցումը տրուած է.՝ «Կը կարողանա՞նք արդեօք՝ քաղաքականապէս կազմակերպուել ու որակապէս վերափոխուել որպէս ժողովուրդ եւ պետութիւն, եւ դառնալ համամարդկային ԳՈՐԾՕՆ, եւ ոչ թէ ԳՈՐԾԻՔ՝ ուրիշների ձեռքում... այլապէս՝ դուրս կը մղուենք պատմութեան յետագայ ընթացքից: Եթէ չդառնանք այդ ԳՈՐԾՕՆԸ, ապա բնութեան օրէնքի համաձայն ինքներս մեզ մահուան ենք դատապարտելու»...:

Նոյն հարցումը մենք կուտանք՝ Արեւմտահայաստանի եւ Տարագիր Արեւմտահայութեան ապագային շուրջ:

Պէյրութ, 27 Մարտ 2011

Արթուր Գ. Տէրտէրեան